



The European Union
for Georgia

ENPARD: Support to Agriculture
and Rural Development



Տեղական գործող խմբի կանայք մասնակցեցին Թբիլիսիի գլոբալ բիզնես ֆորումին

Կանայք, որպես շրջանային հասարակության զարգացման մոդել

Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտի գյուղատնտեսության զարգացման բաժինը 2016 թվականի նոյեմբերից հաջողությամբ իրագործում է «Գյուղի զարգացման նոր մոտեցման աջակցությունը Ախալքալաքում» նախագիծը:

Նախագծի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից, Վրաստանի գյուղի եւ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող նախագծի աջակցությամբ, տեղական՝ հանրային, մասնավոր եւ քաղաքացիական ոլորտի ներկայացուցիչների ներգրավվածության համար ստեղծվեց տեղական գործող խումբ: Խմբի նպատակն է մունիցիպալիտետի տեղական զարգացման ռազմավարության մշակումը: Նախագիծը նաեւ ներառում է դրամաշնորհային բաղադրիչ, որը նախատեսում է բնակչության կողմից ներկայացրած տեղական զարգացման նախագծային առաջարկի ընտրում եւ այդ նախագծերի ֆինանսավորում: Ներկայացված նախագծային առաջարկները ուղղված պետք է լինի դեպի Ախալքալաքի մունիցիպալիտետի տնտեսական, սոցիալական, մշակութային եւ կրթական զարգացմանը:

Ախալքալաքի տեղական զարգացման խմբի կարեւոր ձեռքբերումներից մեկն է 3 անդամ կանանց մասնակցությունը գլոբալ բիզնես ֆորումին, որը կայացավ բիզնեսմեն կանանց միության կազմակերպությամբ Թբիլիսիում 2017 թվականի սեպտեմբերի 15-16-ը, Բիլտմոր հյուրանոցում: Կանանց մասնակցությունը պայմանավորեց նրանց աշխատելը կանանց եւ երիտասարդների աջակցության խմբում, որի նպատակն է խրախուսել կանանց եւ երիտասարդներին հասարակական (Video: <https://youtu.be/FDJQRMcfFSc>)

ակտիվություններին մասնակցելու գործում իսկ առանձնահատուկ շեշտ դրվում է դրամաշնորհային բաղադրիչին: Նշված ֆորումին մասնակցում էին Ախալքալաքի տեղական զարգացման խմբի անդամները՝ Անուշ Գիլոյանը, Շողիկ Ռախսյանը եւ Դալի Աղդոմեւլաձեն:



«Ես անհամբեր սպասում էի այս միջոցառմանը», - հայտարարեց Անուշ Գիլոյանը՝ Ախալքալաքի երիտասարդ բնակիչը: «Շատ բան սովորեցի, օրին.՝ այն, որ կապ չունի թե ծագումով որտեղից ես կամ սոցիալական որ խավին ես պատկանում: Եթե աշխատես քրտնաջան եւ չհանձնվես, ապա անպայման կհասնես ցանկալի արդյունքի: Ես լսեցի մի տիկնոջ՝ Հնդկաստանից, որը մեծացել էր նույն

մտածելակերպով ինչ, որ ես: Նա հասավ ամեն ինչի, սկսեց զրոյից եւ հիմա ունի սեփական բիզնես: Մենք պետք է շեղվենք մեր մտածելակերպից, որը խոչընդոտում է մեզ: Անրհաժեշտ է լսել նման պատմություններ Ախալքալաքում, որպեսզի հավատանք մեր սեփական ուժերին», -նշեց Գիլոյանը:

Դալի Աղդոմեւլաձեն կիսեց Գիլոյանի կարծիքը եւ նշեց. «Մենք տեսանք կանանց, ոքեր ինքնուրույն սկսեցին եւ զարգացրեցին իրական բիզնես, եւ հանդիպեցի տարբեր երկրների ներկայացուցիչների հետ, ոքեր պատկանում են տարբեր մշակույթի: Շատ հետաքրքիր էր լսել, թե ինչպես են նրանք աշխատում եւ հասնում հաջողության: Ես զրուցեցի ուսցչուհու հետ՝ Անգլիայից, որը զուգահեռ աշխատում է որպես շամպայնի դիստրիբյուտոր: Այս օրինակը ցույց է տալիս, որ կարող ենք հասնել հաջողության տարբեր ոլորտում:



Գլոբալ բիզնես ֆորումը տեղական եւ միջազգային բանախոսներին 2 օրվա ընթացքում առաջարկում էր բաց դիսկուսյաններ եւ ներածական նիստեր տարբեր հարցերի շուրջ, մասնավորապես՝ ձեռնարկատիրական միտումներ եւ բիզնեսի էթիկա տարբեր մշակույթերում, ռազմավարություններ հին եւ նոր միտումների ներդաշնակեցման համար, կանանց դերը երկրի տնտեսության հզորացման հարցում եւ 21-րդ դարի բիզնես միջավայրի մարտահրավերները: Ֆորումը, որը կայանում է ամեն տարի, կազմակերպված է բիզնեսմեն կանանց միության կողմից եւ նպատակն է միավորել հաջողակ բիզնեսմեն կանանց, կիսել փորձը եւ զարգացնել համագործակցությունը:

«Մոտիվացիա, իրական մոտիվացիա»-այսպես պատասխանեց Անուշ Գիլոյանը հարցին, թե ինչ տվեց նրան մասնակցությունը Ֆորումին: «Ֆորումը ցույց տվեց, որ կանայք ունեն իրենց տեղը բիզնեսում: Ես հանդիպեցի կանանց աշխարհի տարբեր երկրներից, ովքեր համոզեցին ինձ, որ մենք կարող ենք անել եւ ստեղծել նորը, կարող ենք լինել տղամարդկանց հավասար բիզնեսում: Հանդիպմանը սոց կայքում բեռնում էի տարբեր բանախոսների տեսանյութեր, որպեսզի ուրիշներն էլ կարողանային լսել եւ դիտել, որը մեծ արձագանք ունեցավ: Երիտասարդները հարց էին տալիս թե որտեղ էի գտնվում եւ ինչ էր կատարվում: Երբ ես վերադարձա Ախալքալաք, մենք հանդիպեցինք իրար եւ քննարկեցինք տարբեր հարցեր» -նշեց նա:

“Մեր մտածելակերպը պետք է փոխվի: Մեր երիտասարդները պետք է հասկանան, որ նրանք պարտավոր չեն ընտանիք կազմեն 17 կամ 18 տարեկան հասակում: Նրանց անհրաժեշտ է գիտենալ, որ ունեն հնարավորություն սովորելու, գնալու արտասահման, տեսնել այլ երկրներ եւ իմանալ, թե ինչպես են ապրում տարբեր մտածելակերպ ունեցող մարդի”

– Անուշ Գիլոյան

Ախալքալաքի մունիցիպալիտետը, այնպես ինչպես Վրաստանի տարբեր շրջաններում, բազում մարտահրավերներ եւ արգելքներ ունի, որը բնակչության ավանդական եւ կոնսերվատիվ մտածելակերպի հետ է կապված: Զուգահեռ դրան, կանանց դերը ընտանիքում եւ հասարկությունում սահմանափակված է, որը հետեւում է հին մեծելակերպից, ըստ որի կինը պետք է հոգար միայն ընտանիքի մասին, իսկ տղամարդը պետք է աշխատեր եւ լիներ առաջնորդ: Չնայած նրան, որ Ախալքալաքի տեղական զարգացման խմբում կան կին անդամներ, նրանց թիվը շատ ավելի քիչ է, քան կանխատեսված թիվը: Չնայած դրան խմբի կին անդամները շատ ակտիվ են:

«Ես աշխատում եմ կանանց իրավունքների հզորացման համար» նշեց Դալի Աղդոմելաձեն: «Մեր կրթական կենտրոնում մենք հաճախ ենք հանդիպում տեղի կանանց եւ նրանց ասում՝ եթե ուզում եք լինել ազատ եւ անկախ պետք է գումար վաստակել, իսկ դրա համար հարկավոր է ստանալ համապատասխան կրթություն եւ գտնել լավ գործ: Ես նրանց խորհուրդ եմ տալիս չամուսնանալ վաղ հասակում, ինչը ընդունված է մեր հասարակությունում: Այն կանայք, ոքեր չունեն իրենց սեփական կյանքը, հաճախ են դառնում ընտանեկան բռնության զոհ: Նրանք պետք է հասկանան, որ ունեն կրթություն ստանալու եւ աշխատելու իրավունք: Պետք է հավատան, որ կարող են խնամել ընտանիքը եւ աշխատել միաժամանակ»:

Տեղական զարգացման խմբի Ախալքալաքի գրասենյակը ակտիվորեն է աշխատում եւ ծածկում է մունիցիպալիտետի 63 գյուղ եւ 22 համայնք: Մինչ օրս իրագործվեց ինքնագիտացման բարձրացման միջոցառումներ, LEADER մոտեցման ուսուցում (LEADER Ֆրանսերեն բառ է եւ նշանակում է գյուղի զարգացման համար ընդունած արդյունավետ որոշումներ) անդամների միջեւ: Ընթանում է աշխատանքներ մունիցիպալիտետի տեղական զարգացման ռազմավարությունների փաստաթղթերի վրա: Իսկ մոտ ապագայում պլանավորվում է տեղական զարգացման նախագծային առաջարկների քննարկում եւ դիմորդների ընտրություն ֆինանսավորման համար, կանանց եւ երիտասարդների խմբի ստեղծում եւ ուսումնական այց Իռլանդիա:

«Ինձ համար մեծ պատիվ է աշխատել երիտասարդների հետ եւ մասնակցել նրանց հայեցողությունների ձեւավորման մեջ», -նշեց Դալի Աղդոմելաձեն հարցին կանանց վերաբերյալ հարցին պատասցանելիս, որպես շրջանային հասարակության զարգացման դերային մոդելներին:

«Նույնիսկ չեմ էլ մտածում գնամ ուրիշ երկիր ապրելու համար, քանի որ անում եմ այն ինչը, որ սիրում եմ: Ես ստանձնել եմ կարելու պատասխանատվություն՝ սովորեցնել Ախալքալաքի երիտասարդներին եւ կիսել սեփական փորձը: Շատ մարդիկ ունեն լավ գաղափարներ, բայց վախենում են բարձրաձայնել, քանի որ չգիտեն ինչ կմտածեն ուրիշները այդ գաղափարի մասին: Մարդիկ պետք է լինեն ավելի ինքնավստահ իրենց հնարավորություններում: Մի քիչ առաջ մեր դաստուներից մեկը առաջադրեց իր թեկնածությունը քաղաքապետի պաշտոնին, սկայն նա վախենում է, թե ինչ կմտածեն ուրիշները այդ մասին: Կանայք պետք է օգտագործեն իրենց ձայնը եւ չպետք է վախենան ոչ մի բանից»:

Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտի գյուղատնտեսության զարգացման բաժնի՝ «Գյուղի զարգացման նոր մոտեցման աջակցությունը Ախալքալաքում» նախագիծը կշարունակվի մինչեւ 2020 թվականի հուլիս ամիս:

Զեֆրի Մորսկի

Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտի գյուղատնտեսության զարգացման բաժնի հրավիրված խորհրդատու:

For additional information please visit: www.enpard.ge www.akhalkalakilag.ge

